**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

<<26>> հունիսի 2024 թ. քաղաք Մարալիկ

2024 թվականի հունիսի 26-ին ժամը $15^{30}$-ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում, Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Համայնքի ավագանու նիստը վարում էր Անի համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Հարություն Համբարյանը:

Զեկուցողը նշեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի համաձայն Ավագանու հերթական առաջին նստաշրջանները գումարվում է փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին, այսինքն այսօր: Իսկ երկրորդ նստաշրջանը գումարվում է սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, ավագանու հերթական նիստից մեկ շաբաթ առաջ հրապարակվել է ավագանու այսօրվա նիստի օրակարգը և ավագանու որոշումների նախագծերը, նշվել են նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվել են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում, տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվել է մարզպետարանի, համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքերում և հրապարակային ծանուցումների www.Azdarar.am կայքում:

Զեկուցվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու հերթական նիստին մասնակցում են <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության ավագանու 11 անդամները՝

1. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,

3. ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ
5. ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ՁԱՏԻԿՅԱՆԸ,
7. ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ
9. ԺԻՐԱՅԻ ԱԼԵՔՅԱՆԸ
10. ՆԱԻՐԱ ՍԱՐՈՅԱՆԸ,
11. ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին անհարգելի բացակայում էին՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԳԵՎՈՐԳ ՂԶՐՈՅԱՆԸ,
2. ՍՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
3. ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ,
4. ԱՐՍԵՆ ՎԱՐՈՍՅԱՆԸ,
5. ԼՈՒԻԶԱ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԸ,
6. ԱՐՄԵՆ ՆԻԿՈՅԱՆԸ,
7. ԹԱԳՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ,
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ Անի համայնքի ավագանու անդամ՝

1. ԱՐՄԵՆԱԿ ՄԵԼՈՅԱՆԸ:

Նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի տեղակալները, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, համայնքի ներկայացուցիչներ:

Նիստը վարող՝ Արման Սարիբեկյանը համայնքի ավագանուն տեղեկացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Հայտարարվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից համայնքի ավագանու նիստին մանակցում են 11-ը, այսինքն քվորումն ապահովված է:

Անի համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Զեկուցողը տեղեկացրեց, որ համայնքի ավագանու առաջին նստաշրջանում <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի Անի համայնքի ավագանու 7 անդամները, <<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> կուսակցության ավագանու 1 անդամները և <<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցության ավագանու 2 անդամներից 1-ը անհարգելի բացակայել է համայնքի ավագանու առաջին նստաշրջանի բոլոր 6 նիստերից, իսկ 1 անդամը՝ 5 նիստերից: <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից:

Համայնքի ավագանու բոլոր 6 նիստերից անհարգելի բացակայություն ունեցող ավագանու անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնու վերաբերյալ ավագանու որոշման նախագիծը կներկայացվի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստում:

Համայնքի ավագանին անցավ օրակարգային հարցերի քննարկմանը.

Ներկայացվեց համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը.

**ՕՐԱԿԱՐԳ**

Համայնքի ավագանու նիստի քննարկմանն է ներկայացվում օրակարգային 15 հարցեր:

Ներկայացնում եմ համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝

# ՕՐԱԿԱՐԳ

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԵՐԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄՍԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆ 3-ՕՐՅԱ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՌՈՒԲԵՆ ԵՐՎԱՆԴԻ ԵՐՎԱՆԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՀՐԱՉՅԱ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՂԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՌԱՋԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0042-0033 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0016 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՄՈ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

12) ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0029-0108 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00886 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0020-0179 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,04 ՀԵԿՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0020-0194 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0246 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 20 ՇԵՆՔԻ ԹԻՎ 31 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՒՍԱՆՆԱ ՊԱՐՈՒՅՐԻ ՆԻԿՈԼՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

15) «ԱԳԱ ՍԹՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություն ներկայացրեց ավագանու անդամ <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության խմբակցության ղեկավար՝ Էդիկ Ոսկանյանը:

Զեկուցվեց, որ համայնքի ավագանին հունիսի վերջին չորեքշաբթի օրվանից, այսինքն վաղվանից մինչև սեպտեմբերի 10-ը գտնվելու է արձակուրդում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, հրատապ անհրաժեշտություն է առաջացել օրակարգում ընդգրկել պետական ծրագրի շրջանակներում Մարալիկ քաղաքում նախետեսված 150 տեղ հզորության և Քարաբերդ գյուղում նախատեսված 50 տեղ հզորության մանկապարտեզների կառուցման համար համապատասխան հողամասերի հատկացման հարցերը՝

16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

17) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-022- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1.159001 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՑ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 150 ՏԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Տեղեկացվեց, որ հարցը քննարկվել է նաև խմբակցության նիստում և արժանացել է հավանության:

Հաշվի առնելով հացի հրատապությունը, քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով, համայնքի ավագանու կողմից առաջարկությունն ընդունվեց և օրակարգում ընդգրկվեց առաջարկված օրակարգային հարցը:

Համայնքի ղեկավարի կողմից առաջարկություն ներկայացվեց օրակարգից հանել 4-րդ <<4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/>> հարցը, քանի որ այն չի քննարկվել և հաստատվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 20-ի N 196-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սոցիալական հարցերի հանձնաժողովի նիստում և շահառուների կարիքավորությունը չի գնահատվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչներին>>

համապատասխան:

Առաջարկություն ներկայացվեց օրակարգից հանել նաև <<12) ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0029-0108 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00886 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/>> հարցը, քանի որ այն ունի լրացուցիչ ուսումնասիրության և համայնքի համար շահեկան պայմաններ ապահովելու անհրաժեշտություն:

Տեղեկացվեց, որ ներկայացված առաջարկությունները քննարկվել է նաև <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության խմբակցության նիստում և արժանացել է հավանության:

Առաջարկություն ստացվեց ներկայացված առաջարկություններով հանդերձ, հաստատել ավագանու նիստի օրակարգը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 62-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 7-Ա որոշումը

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ին ժամը $15^{30}$-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024

ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԵՐԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄՍԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆ 3-ՕՐՅԱ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՊԱՐԶԱՆՈՒՇ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՀՐԱՉՅԱ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱԴԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՌԱՋԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0042-0033 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0016 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՄՈ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0020-0179 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,04 ՀԵԿՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0020-0194 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0246 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 20 ՇԵՆՔԻ ԹԻՎ 31 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՒՍԱՆՆԱ ՊԱՐՈՒՅՐԻ ՆԻԿՈԼՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) «ԱԳԱ ՍԹՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ 1-ԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-022- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1.159001 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 150 ՏԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգ-2</u>

**2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի հունիսի 5-ի N 02.1/05179-2024 գրությամբ՝ կապված Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունիսի 3-ի № ԳՍ/15.4/17602-2024 հանձնարարականի հետ, առաջարկություն է ներկայացվել ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 108-Ա և 2024 թվականի փետրվարի 15-ի N 12-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 52-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի հաստիքացուցակը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված <<Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի կազմման, կառուցվածքի հաստատման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման մեթոդական ուղեցույցի>> պահանջներին:

Մասնավորապես, հարցը վերաբերվում է համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներում գլխավոր մասնագետի հաստիքի պարտադիր լինելու հանգամանքին:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով:

Հայտարարվեց՝ եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում եմ ներկայացնել:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված <<Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի կազմման, կառուցվածքի հաստատման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման մեթոդական ուղեցույցը>>, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի հունիսի 5-ի N 02.1/05179-2024 գրությունը, կապված Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունիսի 3-ի № ԳՍ/15.4/17602-2024 հանձնարարականի հետ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 108-Ա և 2024 թվականի փետրվարի 15-ի N 12-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 52-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

ա) Որոշման N 2 հավելվածի աղյուսակի <<5. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ>> մասի <<5. 1>>-րդ կետի հետո ավելացնել նոր <<5.1.1>>-րդ կետ հետևյալ խմբագրությամբ՝

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքների քանակը | Հաստիքային միավորը | Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (Հազար դրամ) | Ընդամենը (Հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 5.1.1 | Բաժնի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 280.0 | 280.0 |

բ) Որոշման N 2 հավելվածի աղյուսակի <<5. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ>> մասի 5.4-րդ կետի 3-րդ սյունակում նշված <<2>> թիվը փոխարինել 1 թվով, իսկ 6-րդ սյունակի <<360. 0>> թիվը փոխարինել <<180.0>> թվով:

գ) Որոշման N 2 հավելվածի աղյուսակի <<8. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՏՈՒՐԻԶՄԻ, ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺԻՆ>> մասի <<8.1>>-րդ կետից հետո ավելացնել նոր <<8.1.1>>-րդ կետ հետևյալ խմբագրությամբ:

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքների քանակը | Հաստիքային միավորը | Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (Հազար դրամ) | Ընդամենը (Հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 8.1.1 | Բաժնի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 280 000 | 280 000 |

դ) Որոշման N 2 հավելվածի աղյուսակի <<8. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՏՈՒՐԻԶՄԻ, ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺԻՆ>> մասի 8.5-րդ կետի 3-րդ սյունակում նշված <<3>> թիվը փոխարինել <<2>> թվով, իսկ 6-րդ սյունակի <<540.0>> թիվը փոխարինել <<360.0>> թվով:

ե) Որոշման N 2 հավելվածի աղյուսակի << 9. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆ>> մասի <<9.1>>-րդ կետից հետո ավելացնել նոր <<9.1.1>>-րդ կետ հետևյալ խմբագրությամբ:

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքների քանակը | Հաստիքային միավորը | Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (Հազար դրամ) | Ընդամենը (Հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 9.1.1 | Բաժնի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 280 000 | 280 000 |

զ) Որոշման N 2 հավելվածի աղյուսակի << 11. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՉՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ>> մասի <<11.2>>-րդ կետը հանել, փոխարենը ավելացնել <<11.2.1>>-րդ, <<11.2.2>>-րդ, <<11.2.3>>-րդ կետեր՝ հետևյալ խմբագրությամբ:

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքների քանակը | Հաստիքային միավորը | Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | | | | (Հազար դրամ) | (Հազար դրամ) |
| 11.2.1 | Գլխավոր մասնագետ /Իրավաբան/ | 1 | 1 | 280.0 | 280.0 |
| 11.2.2 | Գլխավոր մասնագետ /Գնումների մասնագետ/ | 1 | 1 | 280.0 | 280.0 |
| 11.2.3 | Գլխավոր մասնագետ /Սոցիալական աշխատող/ | 1 | 1 | 280.0 | 280.0 |

է) Որոշման N 2 հավելվածի աղյուսակի << 11. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՉՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ>> մասի <<11.3>>-րդ կետը հանել, փոխարենը ավելացնել <<11.3.1>>-րդ, <<11.3.2>>-րդ, <<11.3.3>>-րդ, <<11.3.4>>-րդ կետեր՝ հետևյալ խմբագրությամբ:

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքների քանակը | Հաստիքային միավորը | Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | | | | (Հազար դրամ) | (Հազար դրամ) |
| 11.3.1 | Առաջատար մասնագետ /Կադրային գործ/ | 1 | 1 | 250.0 | 250.0 |
| 11.3.2 | Առաջատար մասնագետ (Բնակչության ռեգիստր) | 1 | 1 | 250.0 | 250.0 |
| 11.3.3 | Առաջատար մասնագետ (Իրավաբանին աջակցող մասնագետ) | 1 | 1 | 250.0 | 250.0 |
| 11.3.4 | Առաջատար մասնագետ (Գնումների մասնագետին աջակցող մասնագետ) | 1 | 1 | 250.0 | 250.0 |

ը) Որոշման N 2 հավելվածի աղյուսակի << 11. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՉՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ>> մասի <<11.4>>-րդ կետը հանել, փոխարենը ավելացնել <<11.7.1>>-րդ, <<11.7.2>>-րդ կետեր՝ հետևյալ խմբագրությամբ:

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքների քանակը | Հաստիքային միավորը | Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|

| | | | | (Հազար դրամ) | (Հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 11.7.1 | Առաջին կարգի մասնագետ (Փաստաթղթաշրջանառություն սպասարկման մասնագետ) | 1 | 1 | 220.0 | 220.0 |
| 11.7.2 | Առաջատար մասնագետ (Զորակոչի և զորահավաքի կազմակերպման գործընթացին աջակցող մասնագետ) | 1 | 1 | 220.0 | 220.0 |

թ) Որոշման հավելվածի աղյուսակի <<12. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ>> մասի 12.1-րդ կետի 3-րդ սյունակում նշված <<2>> թիվը փոխարինել <<1>> թվով, իսկ 6-րդ սյունակի <<320.0>> թիվը փոխարինել <<160.0>> թվով:

ժ) Որոշման հավելվածի աղյուսակի <<2. ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ>> մասի <<2. 4>>-րդ կետից հետո ավելացնել նոր <<2.5>>-րդ կետ հետևյալ խմբագրությամբ:

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքների քանակը | Հաստիքային միավորը | Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | | | | (Հազար դրամ) | (Հազար դրամ) |
| 2.5 | Համայնքի ղեկավարի տեղակալի օգնական | 1 | 1 | 160.0 | 160.0 |

ի) Որոշման հավելվածի աղյուսակի <<2. ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ>> մասի <<Ընդամենը՝ հայեցողական պաշտոններ>> տողի <<6>> թիվը փոխարինել <<7>> թվով, իսկ 6-րդ սյունակի <<1400,0>> թիվը փոխարինել <<1560,0>> թվով:

լ) Որոշման հավելվածի աղյուսակի վերջին՝ <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 3-րդ սյունակի <<113> թիվը փոխարինել <<114>> թվով, իսկ 6-րդ սյունակի <<25556,6>> թիվը փոխարինել <<26036,6>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**<u>Օրակարգ-3</u>**

3) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԵՐԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ քրոշման նախագծով նախատեսվում է հանրապետական առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլերին հաղթող ճանաչված Անի համայնքի հանրակրթական դպրոցների աշակերտների համար սահմանել դրամական խրախուսանքի միջոցներ, որը նախատեսվում է հատկացնել Անի համայնքի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/:

Նախագծով նախատեսվում է սահմանել դրամական խրախուսանքի հետևյալ չափերը՝

| Հ/Հ | Հանրապետական առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլի դիպլոմի կարգը | **Միանվագ տրամադրվող դրամական խրախուսանքի չափը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|
| 1. | Հանրապետական առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի 1-ին կարգի դիպլոմակիր աշակերտին. | 50 000 |
| 2. | Հանրապետական առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի 2-րդ կարգի դիպլոմակիր աշակերտին. | 30 000 |
| 3. | Հանրապետական առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի 3-րդ կարգի դիպլոմակիր աշակերտին. | 20 000 |

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԵՐԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները>>.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Սահմանել հանրապետական առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլերին հաղթող ճանաչված Անի համայնքի հանրակրթական դպրոցների աշակերտների համար դրամական խրախուսանքի միջոցներ կիրառելու չափ՝ համաձայն հավելվածի:

2. Հանրապետական առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլերին հաղթող ճանաչված Անի համայնքի հանրակրթական դպրոցների աշակերտների համար դրամական խրախուսանքի միջոցներ հատկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական

դասակարգման 4727 հոդվածից /կրթական, մշակութային և սպորտային նպատներ բյուջեից/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման հավելվածը կցվում է որոշմանը:

**Օրակարգ-4**

**4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄՍԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն համայնքի ավագանու անդամը իրավունք ունի ստանալու դրամական փոխհատուցում՝ նշված օրենքով սահմանված կարգով իր պարտականություններն իրականացնելու հետևանքով կատարած ծախսերի դիմաց: Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն համայնքի ավագանու անդամը իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց իր ցանկությամբ և ավագանու որոշմամբ կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի մինչև 30 տոկոսի չափով:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի ավագանու անդամի պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի համար սահմանել ամսական դրամական փոխհատուցում, որի չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի 20 տոկոսը /50 000 /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ/:

Ավագանու անդամի պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի համար դրամական փոխհահուցումը նախատեսել պարտականությունների կատարման վերաբերյալ ավագանու անդամի կողմից ներկայացվող համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա:

Հայտարարվեց՝ եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում եմ ներկայացնել:

Առաջարկությունով հանդես եկավ ավագանու անդամ Հասմիկ Զատիկյանը:

Առաջարկվեց՝ որոշման նախագծի <<20 տոկոսը>> փոխարինել <<25 տոկոսով>>՝ /62 500 /վաթսուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը՝ ներկայացված

առաջարկության համաձայն:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄՍԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 24-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամի պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի համար սահմանել ամսական դրամական փոխհատուցում, որի չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի 25 տոկոսը /62 500 /վաթսուներկու հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ/:

2. Ավագանու անդամի պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի համար դրամական փոխհահուցումը կատարել պարտականությունների կատարման վերաբերյալ ավագանու անդամի կողմից ներկայացվող համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա:

3. Համայնքի ավագանու անդամի պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի համար դրամական փոխհատուցումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բյուջեի 01.06.01 /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ և տնտեսագիտական դասակարգման 4221 /ներքին գործուղումներ/ հոդվածից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

__Օրակարգ-5__

**5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆ 3-ՕՐՅԱ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ**

ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ համայնքապետարանը նախաձեռնել է գործընթաց՝ Անի համայնքի 18 հանրակրթական դպրոցներից ընտրված 2023-2024 թվականների ուսումնական տարում գերազանց առաջադիմություն ունեցող թվով 18 աշակերտների, դպրոցի մեկ տնօրենի, մեկ մանկավարժի, մեկ ծնողի և համայնքապետարանի աշխատակազմի մեկ աշխատակցի, որպես խրախուսանք, կազմակերպել շրջագայություն՝ դեպի Վրաստան:

Ինչպես գիտեք, համայնքապետարանը մերժեցեց <<Հակոբյաններ>> հիմնադրամի առաջանկը՝ դեպի Դուբայ շրջագայության համար գումարի հատկացումը:

Նախագծով նախատեսվում է՝

ա) Հանրակրթական դպրոցի գերազանց առաջադիմություն ունեցող մեկ աշակերտի ընտրությունն իրականացնել տվյալ դպրոցի գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների միջև անցկացվող հրապարակային վիճակահանության միջոցով.

բ) Հանրակրթական դպրոցի մեկ տնօրենի ընտրությունն իրակնացնել համայնքի 18 հանրակրթական դպրոցների տնօրենների միջև անցկացվող հրապարակային վիճակահանության միջոցով.

գ) Հանրակրթական դպրոցի մեկ մանկավարժի ընտրությունն իրականացնել հրապարակային վիճակահանության միջոցով յուրաքանչյուր դպրոցից ընտրված 18 մանկավարժների միջև անցկացվող հրապարակային վիճակահանության միջոցով.

դ) Մեկ ծնողի ընտրությունն իրականացնել հանրակրթական դպրոցների ծնողական խորհրդի նախագահների միջև անցկացվող հրապարակային վիճակահանության միջոցով.

Շրջագայությունն ապահովելու համար նախատեսվում է Անիի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 /Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն/ և տնտեսագիտական դասակարգման 4637 /Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածից հատկացնել 1 184 700 /մեկ միլիոն հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆ 3-ՕՐՅԱ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի

Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի նախաձեռնությամբ Անի համայնքի 18 հանրակրթական դպրոցներից ընտրված 2023-2024 թվականների ուսումնական տարում գերազանց առաջադիմություն ունեցող 9-11-րդ դասարանների թվով 18 աշակերտների, դպրոցի մեկ տնօրենի, մեկ մանկավարժի, մեկ ծնողի /հետագայում Շահառու/ և համայնքապետարանի աշխատակազմի մեկ աշխատակցի, որպես խրախուսանք, կազմակերպել շրջագայություն՝ դեպի Վրաստան:

2. Շահառուների ընտրությունն իրականացնելու համար սահմանել հետևյալ ընթացակարգը՝

ա) Հանրակրթական դպրոցի գերազանց առաջադիմություն ունեցող մեկ աշակերտի ընտրությունն իրականացնել տվյալ դպրոցի գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների միջև անցկացվող հրապարակային վիճակահանության միջոցով.

բ) Հանրակրթական դպրոցի մեկ տնօրենի ընտրությունն իրակնացնել համայնքի 18 հանրակրթական դպրոցների տնօրենների միջև անցկացվող հրապարակային վիճակահանության միջոցով.

գ) Հանրակրթական դպրոցի մեկ մանկավարժի ընտրությունն իրականացնել հրապարակային վիճակահանության միջոցով յուրաքանչյուր դպոցից ընտրված 18 մանկավարժների միջև անցկացվող հրապարակային վիճակահանության միջոցով.
դ) Մեկ ծնողի ընտրությունն իրականացնել հանրակրթական դպրոցների ծնողական խորհրդի նախագահների միջև անցկացվող հրապարակային վիճակահանության միջոցով
.

3. Սույն որոշման 1-ին կետում նշված շրջագայությունն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 /Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն/ և տնտեսագիտական դասակարգման 4637 /Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածից հատկացնել 1 184 700 /մեկ միլիոն հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին

Հսկողություն իրականացնել սույն որոման 2-րդ կետով սահմանված ընթացակարգին համապատասխան համայնքի հանրակրթական դպրոցներում Շահառուների ընտրությունն իրականացնելու գործընթացի նկատմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Օրակարգ-6**

**6) <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքը անդամակցում է <<Հայաստանի համայնքների միություն>> հասարակական կազմակերպությանը: Համաձայն կազմակերպության կանոնադրության և ստորագրված անդամակցության համաձայնագրի անդամավճարի չափ է սահմանված 230390 /երկու հարյուր երեսուն հազար երեք հարյուր իննսուն/ ՀՀ դրամ:

Գումարը նախատեսվում է հատկացնել համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ և տնտեսագիտական դասակարգման 4819 /Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածից:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթով:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի անդամակցությունը <<Հայաստանի համայնքների միություն>> հասարակական կազմակերպությանը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ և տնտեսագիտական դասակարգման 4819 /Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածից **230390** /երկու հարյուր երեսուն հազար երեք հարյուր իննսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել <<Հայաստանի համայնքների միություն>> հասարակական կազմակերպությանը՝ որպես անդամավճար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Օրակարգ-7**

**7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

Ավագանու որոշման նախագիծը՝ համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին, ներկայացնելու համար ձայնը տրվում է համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անժելա Սաղաթելյանին:

